**«Տեսահսկման» ծառայության պայմաններ ու գնացուցակ**

**1.** «Տեսահսկման» ծառայությունը նախատեսված է տարբեր հաստատություններում տեսահսկում իրականացնելու համար:

**2.** «Տեսահսկման» ծառայության շրջանակում գործում են հետևյալ ծառայությունները՝

- «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայություն,
- «Հարթակի օգտագործում» ծառայություն:

**3.** «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայությունը տրամադրվում է՝

**3.1** 1 (մեկ) օր տևողությամբ,

**3.2** 3 (երեք) օր տևողությամբ,

**3.3** 7 (յոթ) օր տևողությամբ,

**3.4** 14 (տասնչորս) օր տևողությամբ:

**3.5** «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայությունը տրամադրվում է ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում սահմանված գնացուցակով:

**Աղյուսակ 1. «Արխիվային պահոցի վարձակալություն»** ծառայության գնացուցակ.

| Արխիվային պահոցի վարձակալության տևողություն | Արխիվային պահոցի վարձակալության վճար |
|---|---|
| 1 (մեկ) օր | 1150 դրամ |
| 3 (երեք) օր | 1450 դրամ |
| 7 (յոթ) օր | 1900 դրամ |
| 14 (տասնչորս) օր | 2800 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**3.6** «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայության շրջանակում Ժամանակավոր կասեցում ծառայությունը:

**4.** **«Հարթակի օգտագործման վճար»** ծառայությունը տրամադրվում է Աղյուսակ 2-ում սահմանված գնացուցակով:

**4.1.** **Աղյուսակ 2. «Հարթակի օգտագործում»** ծառայության գնացուցակ.

| | |
|---|---|
| «Հարթակի օգտագործում» յուրաքանչյուր տեսախցիկի համար | 1000 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**4.2.** «Հարթակի օգտագործում» ծառայության շրջանակում հասանելի է Ժամանակավոր կասեցում ծառայությունը:

**5.** **«Տեսախցիկների վարձակալություն» ծառայությունը**

**5.1.** «Տեսախցիկների վարձակալություն» ծառայությունը տրամադրվում է ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում սահմանված տեսախցիկների մոդելներով և գնացուցակով:

**5.2.** **Աղյուսակ 1. «Տեսախցիկների վարձակալություն»** ծառայության գնացուցակ.

| Տեսախցիկի մոդել | Տեսախցիկի վարձակալության ամսավճար |
|---|---|
| Uniview IPC-3F22P-RB28 | 1000 դրամ |
| Dahua IPC-HFW1230SP v2 | 1000 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**5.3.** Ֆիզիկական անձանց դեպքում յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար սահմանվում է միանվագ վճար:

- 1-ին տեսախցիկի տեղադրման համար սահմանվում է 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միանվագ վճար,
- սկսած 2-րդից՝ յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար սահմանվում է 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միանվագ վճար:

Իրավաբանական անձանց դեպքում յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար սահմանվում է միանվագ վճար՝ ելնելով բաժանորդի մոտ առկա տեխնիկական խնդիրներից և ներկայացրած պահանջներից:

**5.4.** Տեսախցիկը/ները մնում է/են Օպերատորի սեփականությունը:

**5.5.** Տեսախցիկի/ների տեղադրումն ու ապամոնտաժումը կարող է կատարվել նաև Օպերատորի կողմից:

**5.6.** «Տեսախցիկների վարձակալությունը» տրամադրվում է միայն Օպերատորի հասանելիության ծածկույթում:

**5.7.** Տեսախցիկի/ների ապամոնտաժումը կատարվում է Օպերատորի կողմից՝ տեսախցիկը անջատելու (կամ գործող պայմանագիրը դադարեցնելու) պահանջով: Տեսախցիկի/ների ապամոնտաժումը կատարվում է առանց լրացուցիչ վճարի գանձման:

**5.8.** Տեսախցիկների վարձակալություն» ծառայության շրջանակում հասանելի չէ «Ժամանակավոր կասեցում» ծառայությունը:

**5.9.** Տեսախցիկների վարձակալություն» ծառայությունը չի կասեցվում վճարումների ուշացման պատճառով: «Տեսախցիկների վարձակալություն» ծառայության շրջանակում տրամադրված տեսախցիկի/ների համար սահմանված ամսավճարը/ները հաշվեգրվում է/են այնքան ժամանակ մինչև Բաժանորդային պայմանագրով նախատեսված պայմանագրային հարաբերությունների ավարտը:

## 6. Անցումներ

**6.1.** «Տեսահսկման» ծառայությունից անցում Օպերատորի այլ ծառայությունների հնարավոր չէ: Օպերատորի այլ ծառայություններից անցում «Տեսահսկման» ծառայությանը հնարավոր չէ:

## 7. Այլ պայմաններ

**7.1.** Եթե Բաժանորդին տրամադրված «Uniview IPC-3F22P-RB28» և «Dahua IPC-HFW1230SP v2» մոդելների տեսախցիկները վնասվել են (վնասվածքը չի հանդիսանում «Uniview IPC-3F22P-RB28» և «Dahua IPC-HFW1230SP v2» մոդելների տեսախցիկների գործարանային թերության հետևանք) կամ կորել են, ապա Բաժանորդը պարտավոր է փոխհատուցել Օպերատորին Սարք(երի)ի հանձնման-ընդունման ակտ(եր)ում նշված գինն ամբողջությամբ՝ վնասման և/կամ կորստի փաստն արձանագրվելու պահից հաշված 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

**7.2.** Եթե տեսախցիկը կորել է ոչ Բաժանորդի գործողության և/կամ անգործության հետևանքով պայմանավորված, ապա Բաժանորդը պատասխանատվություն չի կրում կորստի համար, եթե վերջինս Օպերատորին ներկայացնում է ՀՀ իրավապահ մարմինների որոշումը այդ գործի մասով:

**7.3.** Եթե առկա չէ ՀՀ իրավապահ մարմինների որոշումը գողության արթիվ Բաժանորդի մեղավորությունը բացառելու մասին , ապա Բաժանորդը պարտավորվում է վճարել Օպերատորի կողմից սահմանված տուգանքը՝ սույն պայմանների 7.1 ենթակետում սահմանված կարգով:

**7.4.** Եթե Բաժանորդը կատարում է հասցեի փոփոխություն, ապա Օպերատորը պատավորվում է ապամոնտաժել տեսախցիկը/ները գործող հասցեից և տեղադրել տեսախցիկը/ները նոր հասցեում՝ համաձայն գործող պայմանների: